ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«Ռազմավարական Զարգացման Գործակալություն» հասարակական կազմակերպության և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության միջև

«Ռազմավարական Զարգացման Գործակալություն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ ՀԿ) և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) (այսուհետ միասին՝ Կողմեր),

ղեկավարվելով սննդամթերքի, անասնաբուժության և բուսասանիտարիայի որորտներում անվտանգության ապահովման և մարդու առողջության ապահովման անհրաժեշտությամբ,

հիմք ընդունելով մարդու առողջության համար սննդամթերքի հնարավոր վնասակար ազդեցությունից պաշտպանության բարձր առաքելությունը,

կարևորելով սննդամթերքի, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում իրականացվող գործողություններնն ու փոփոխությունները, ինչպես նաև դրանց վերաբերայլ հանրային իրազեկումը,

բարձր գնահատելով սննդամթերքի, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում անվտանգության ապահովման գործում Կողմերի արդյունավետ համագործակցության նշանակությունը,

Կնքեցին համագործակցության սույն հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1. Հուշագրի նպատակը

Սույն Հուշագրի նպատակն է սահմանել Կողմերի միջև համագործակցության ուղղությունները, ինչպես նաև կանոնակարգել դրա պայմանները:

2. Համագործակցության ուղղությունները

Սույն Հուշագրի շրջանակներում Կողմերը համագործակցում են **«Սննդամթերքի անվտանգության ոլորտում իրականացվող փոփոխությունների մասին տեղեկատվական արշավ»**-ի շրջանակներում, մասնավորապես՝ հետևյալ ուղղություններով՝

2.1 տեղեկատվական, ուսուցողական կամ սոցիալական բնույթի տեսահոլովակների պատրաստում,

2.2 հաց-հացամթերքի և մսի տեղափոխման նոր կարգի ու սանիտարական անձնագրերի տրամադրման, սպանդանոցային ծագման մսի անվտանգության, HACCP համակարգի մասին իրազեկում,

2.3 ՍԱՊԾ «Թեժ գծի» հեռախոսահամարով ինքնակպչուն թղթիկների տպագրություն,
2.4 սպառողների համար սննդամթերքի անվտանգության ուղեցույցի պատրաստում. անվտանգության հիմնական չափանիշների ներկայացում,
2.5 տնտեսվարողի համար սննդամթերքի անվտանգության ուղեցույցի պատրաստում. անվտանգության հիմնական չափանիշների ներկայացում,
2.6 սննդամթերքի անվտանգության ոլորտը լուսաբանող լրագրողների համար սեմինարի կազմակերպում:
2.7 համատեղ այլ ծրագրերի, միջոցառումների իրականացում՝ ուղղված սննդամթերքի անվտանգության ոլորտի մասին հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ու ՍԱՊԾ աշխատանքն առավել թափանցիկ դարձնելուն:

3. Ներկայացուցչություն

3.1 Կողմերը կշարունակեն աշխատել թափանցիկության և արհեստավարժության հիմունքներով:
3.2 Կողմերը պետք է վստահ լինեն, որ ցանկացած գործողություն, որն իրականացվում է իրենց կողմից, անպայմանորեն ներառում է մյուս կողմի պահանջները և ապահովում է ներկայացուցչության սկզբունքը: Կողմերը պետք է ձեռնպահ մնան այնպիսի գործողություններից և/կամ վարքից, որի հետևանքով կարող են վնասել մյուս կողմի հեղինակությունը:
3.3 ՍԱՊԾ-ն իր համաձայնությունն է տալիս իրազեկման արշավի շրջանակներում տպագրվող նյութերում և պատրաստվող սոցիալական հոլովակներում «Ռազմավարական Զարգացման Գործակալություն ՀԿ-ն և Շվեյցարիայի Զարգացման և Համագործակցության Գործակալությունը ներկայացնել որպես արշավի անցկացմանը աջակցող և ֆինանսավորող կազմակերպություններ՝ օգտագործելով վերջիններիս կողմից տրամադրված տարբերանշանները:
3.4 Սույն հուշագրի շրջանակներում Ռազմավարական Զարգացման Գործակալություն ՀԿ-ն պատրաստակամություն է հայտնում աջակցել սննդամթերքի անվտանգության ոլորտում իրականացվող փոփոխությունների մասին տեղեկատվական արշավի նյութերի տպագրության, սոցիալական տեսահոլովակների պատրաստման գործընթացին և այլ միջոցառումների անցկացմանը, որոնք նախապես համաձայնեցվում են կողմերի միջև հուշագրի սահմաններում:
3.5 Հուշագրի շրջանակներում կողմերը կազմում են համատեղ գործողությունների պլան (հավելվածներ), որտեղ նկարագրվում և սահմանվում են «Ռազմավարական Զարգացման Գործակալություն» ՀԿ աջակցությամբ իրականացվող աշխատանքները, դրանց ծավալը, ժամանակացույցը, ինչպես նաև մոնիթորինգի և ՍԱՊԾ-ի կողմից հաշվետվություն ներկայացնելու կարգն ու ձևաչափը:

4.Տևողությունը

4.1 Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից այն ստորագրվելու օրվանից:
4.2 Հուշագրի գործողության ժամկետը մինչև 2020 թվականի օգոստոսի 31-ը:
4.3 Հուշագրի ստորագրումից հետո դրա ժամկետը կարող է երկարաձգվել Կողմերի հետ համաձայնեցնելուց հետո: Երկարաձգումը պետք է հաստատվի գրավոր և ստորագրվի Կողմերի կողմից:

5. Փոփոխությունները

Համագործակցության պայմանները կարող են փոխվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Պայմանների փոփոխության գրավոր ծանուցումը պետք է ստորագրվի Կողմերի կողմից:

6. Դադարեցումը

Հուշագիրը կարող է դադարեցվել Կողմերից մեկի կողմից էական պայմանները չկատարելու դեպքում, այն բանից հետո, երբ ողջամիտ ծանուցում և հնարավորություն է տրվել կատարելու ուղղումներ:

7. Մյուս կողմի փոխարեն պատասխանատվություն

Կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում որևէ երրորդ կողմի այս հուշագրից բխող վնասների, կորուստների, շահույթի կամ եկամուտների համար:

Երևան, օգոստոսի 29, 2017թ.	Երևան, օգոստոսի 29, 2017թ
Արմեն Միրզոյան ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի ղեկավար	Կարինե Հարությունյան «Ռազմավարական զարգացման գործակալություն» հասարակական կազմակերպության «Անասնապահության զարգացում Հայաստանի հարավում» ծրագրի ղեկավար